


ԳՐԱԼՈՒՄՈՒԹՅՈՒՆ



ՎԱՐՈՒԺԱՆ ՈՍԿԱՌՅԱՆ

ԽՄԲԱԳԻՐԸ, ԲԱՌԱՍԵՐԸ, ԴԻՎԱՆԱԳԵՏԸ

«Մուղի» հրատարակչությունը լույս է ընծայել «Երվանդ Մելքոնյան. բանասերն ու դիվանագետը» գիրքը, որում ամփոփված են կյանքից վաղաժամ հեռացած գիրնականի գործերի ընդունակություններին և մամուլում հրատարակված գնահատանքի խոսքերն ու հուշերը նրա մասին:

Ինչպես առաջարանում գրում է հագործ հրատարակության պատրաստած Սանդր Քենեթույյանը, հայ մշակույթին, Եկեղեցուն, հայրենիքին նվիրված Երվանդ Մելքոնյանը կարծարեն, սակայն բաղմնակոր կյանքում ծավալեց բազմաշերտ գործունեություն և կարողացավ թողնել հայագիտական մնայուն ուսումնասիրություններ՝ իր անոնք կապերով հայ բազմադարյան հոգևոր մշակույթի հետին: Ներկայացվող հագործում ընդգրկված են «Դավիթ Զեյթունցի քերական», «Վրյանես Քերոսող և պատրիարքարքությունը», «Նսիրոս Երուսաղեմացու մի նորահայր ճառը», «Վկայարանություն Սուրբ Շուշանիկի», «Քացարական բառարանների կառուցվածքը հայ բառարանագրության մեջ», «Մովսես Խորենացին «Արարակ» և «Հջմիածին» ամսագրերում» և մի շարք այլ գործեր:

Սիրիայի Կամիշլի քաղաքում հանգրվանած եղեռնազարկ ընդունակություն 1944 թ. ծնված Երվանդ Մելքոնյանը ծննդավայրում նախնական, Անթիլիասի դարեվանքում հոգևոր ու Մայր Կայրենիքում բարձրագույն կրթություն սրբանալով, նվիրվում է բազմաշերտ գործունեության:

Երևանի Պետրական Համալսարանի բանասիրական Փակուլտետը, ապա ասպիրանտուրան փայլուն ցուցանիշներով ավարտելուց հետո, նա աշխատանքի է անցել Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիայի հրայա Աճառյանի անվան Լեզվի ինստիտուտում: Ինչպես ինքն է գրում, «Ավարտանառու Լվովի Հաճկադար Սուրբ Աստվածածին եկեղեցվոր ճեմարանի դեսուց, լուսամիտ մանկավարժ Դավիթ Զեյթունցի քերականի «Մելքոնյություն քերականի» քերականության դասագիրքն է՝ կազմված հարց ու պատրասխանի ձևով: Այդ մեծ քերականագետ-գիրնականը կգողեր միջնադարյան հունադիմ քերականություններու շրջանը և նախակարապետ կդառնար լատինադիմ քերականության՝ իման-

ված լաբիներենի և եվրոպական լեզուներու ուսումնասիրության վրա: «Եսոք սկսավ գրաքար-աշխարհաբար թարգմանական բառարանի կազմության բազմամյա աշխաբանքը Գիտությունների Ազգային Ակադեմիայի Հրայր Աճառյանի անվան Լեզվի ինստիտուտին մեջ: Մոտ 50 հազար բառ հաշվող բառարանը կսպասե իր խմբագրին և հրագրակության»:

«Անուղեղի» հայրենասեր Երվանդ Մելքոնյանի գիրա-մշակութային և մանկավարժական գործունեությունը նոր բարի սրբացավ «Էջմիածին» ամսագրի գլխավոր խմագրի և Մայր Աթոռի գրաքարի դասախոս աշխաբելու վարիներին:

Գրում գրաբար և աշխարհաբար ներկայացված Վրթանես Քերթողի «Պարկերամարդկան մասին» թուղթը, որն այդ թեմայով հայտնի առաջին գործն է ընդհանուր եկեղեցական գրականության մեջ, հասքապում է այն ենթադրությունը, ըստ որի պարկերամարդական շարժումը եղել է Հայաստանում մորգավորապես մեկուկես դար առաջ, քան Արևմուգը: Թուղթը շար կարևոր է նաև հայ նկարչության պարմության համար: Վրթանես Քերթողը հիշաբակում է Սուրբ Գրիգոր Լուսավորչի, Գայանեի և Տօփիսիմեի նկարների մասին, իեպիսաբար այդ պարկերները պետք է լինեին հայ նկարչիների սրեղծածները, ուստիև Մելքոնյանը ենթադրում է, որ արդեն 5-6-րդ դարերում կար նկարչության հայկական դպրոց:

Ժիմփելով պարկերամարդկան գրեսակերը եկեղեցիներից պարկերները հանելու մասին, Վրթանես Քերթողը նշել է. «Կուոքերի մեխաններում կան Աստղիկն ու Ավիրոդիկեն, նրանց ազդեցություններն ու անառակությունները, իսկ Աստղը եկեղեցիներում Տերունական Խոազը և առարյաների ու մարզաբների խաչակիր զները, որոնք Վերացրին ողջ կրապաշտությունը և դիեզերքը բերին դեպի աստվածապաշտության՝ ամաչեցնելով սարանային և իր գորքերին»:

Հասարակական գործիչ, հոգիի մարդ Երվանդ Մելքոնյանի խորին համոզմամբ, Հայաստանում դեռի ունեցող կործանիչ երկրաշարժի օրը երկրագունդը ափերի մեջ առավ աղեղյալ Հայաստանը և այն դարձավ մարդկության ցավը: «Հավարանք, ուրեմն,- գրեց «Էջմիածին» ամսագրի գլխավոր խմբագրի, - որ Հայաստանը մի օր կդառնա մարդկության սերը, քանի որ մարդկությունը իր այս փոքր ածուից միայն հոգու շռայլություն է դիմել, համաշխարհային մորթի անդաստանում սիրած պաշտամոններ է դիմել, ու այդի գուրգուրա նրան ու անվտանգ պիտի պահի, քանզի մարդկության հոգու շերմության մի կայծն է հայ ժողովրդի ոգու արգասիքն է»:

Արդարն: Երկրաշարժի արհավլայի օրերին գրասնյակ-հարյուրավոր մարդիկ իրենց արյունից բաժին հանեցին արյունաքամ հայ մարդուն: Աղետը, իրոք, միավորեց մարդկությանը սրբազնի Հայաստանի շուրջը:

Թյուրութի «Արարափ» թերթին դպած հարցազրույցում փոխանցելով իր հուշերը երջանկահիշաբակ Վազգեն Ա Կաթողիկոսի մասին, «զոր իրու մարդ, մդավորական, հոգեբան, ուսուցիչ, դաստիարակ և մանավանը կարկառուն եկեղեցական ճանչնալու բախտն ու պատիվն ունեցած եմ՝ ըլլալով անոր երկարամյա պաշտոնակիցը, գործակիցն ու բարեկամը», Մելքոնյանը գրում է, որ Վազգեն Ա Վեհափառ «Ամենեն շար մրահոգ էր Եկեղեցվո ազգային առաքելությանը, որովհետք կիավարար, որ Եկեղեցին լուրջ ըննլիք ունի, մանա-

վանդ Հայաստանի անկախացումն եղք: Վեհափառ ժամանակը երարապ համարեց ժողովրդի հոգևոր վերադասպիհարակության համար, բայց, դժբախփառքը, Եկեղեցին պարագասր չէր և բավարար հոգևոր կրթիչներ չուներ: Շողը պարարգ գետնելով Հայաստան թափանցեցին կարգ մը աղանդներ: Այն ժամանակ Վեհափառ վճռական էր Եկեղեցին վերակազմնու ու իր ժամանակին և համապատասխան ջանքերով նախաձեռնեց կիրակնօրյա դպրոցներ բանալ, Հայ Եկեղեցին երիտասարդական միություններ գոյացնել: Եվ, անշուշտ, եթե Աստված կյանք շնորհեր, շար ըննիշներ ունեն»:

1994 թվականից Երվանդ Մելքոնյանն իր հարուստ փորձն ու գիտելիքներն ի սպաս դրեց հայ դիվանագիրությանը: Աշխարանքի անցնելով Հայաստանի Հանրապետության Արդարքին գործերի նախարարության համակարգում՝ նա մեծ ներդրում ունեցավ հայ-լիբանայան միջազնեպական հարաբերությունների հասքարբման և Լիբանանում Հայաստանի Հանրապետության դեսպանության հիմնադրման գործում:

Անուրանալի է Հայաստանի Հանրապետության առաջին արդակարգ ու լիազոր դիսպաս Մելքոնյանի անձնական ավանդը Հայաստանի և Լիբանանի միջև համակողմանի համագործակցության ծավալման ու բարեկամական կապերի ամրապնդման, Հայոց պետականության շուրջ լիբանանահայությանը համախմբելու հայրենանվեր գործում:

Թե՛ հոբելյանական միջոցառումներին ու մշակության հանդիպումներին, թե՛ Բեյրութի «Արծիվ» գրական, մշակութային, կրոնական և ընկերային շաբաթաթերթին, թե՛ «Արարար» լրազրի թթվակից Լյուսի Զուֆայանին, թե՛ Հայաստանի հանրային ռադիոյի հոգևոր հաղորդումների բաժնի խմբագիր Սիլվա Սուրբիայանին վկած հարցագրույցներում և թե՛ Լիբանանի հայկական դպրոցներում կազմակերպված միջոցառումներին իր ելույթներում նա, որպես պետության ներկայացուցիչ, արժեվորել է հայ-լիբանանյան ամրապնդվող բարեկամությունը՝ Մայր Հայրենիքում ու Սկյուտորում ազգային արժեքների պաշտպանումն ու գնահատումը համարելով յուրաքանչյուր հայի սրբազն պարտքը:

Ազգային արժեքների նկարմամբ պատմախանադպվությունը հայրենապաշտ դիվանագերի խորին համոզմամբ, «պիտի ըլլա Հայրենիք-Սկյուտոր նոր հարաբերությունների մեկնակենքը: Արժեք առաջին. ծեռք բերված անկախությունը՝ չկրանգել զայն: Արժեք երկրորդ. պետականություն՝ մասնակցել կայացմանը: Արժեք երրորդ. մշակութային ժառանգություն՝ իրացնել ու կրել մեր մեջ: Արժեք չորրորդ. պատմական ժառանգություն՝ փոխանցել հաջորդ սերունդներին: Արժեք հինգերորդ. ազգային արժանապատվություն՝ պահել հալարդ, հետո չերաշխավորված հավակնություններեւ: Արժեք վերցերորդ. ազգային բարոյականություն՝ անխարթ պահել: Եվ արժեք յոթերորդ. ազգային համակամություն՝ ոչ մեկություն և երթեր միակություն ու մինակություն, այլ ամրողացյալ, հանուն ամրողական գետականի»:

«Վարդապանակ ազգով ու անոր սրեղծած արժեքներով, լավ է, բայց ավելի լավ է ապրել այսպես, որ ազգը քեզանով հպարտանա»: Այս նշանաբանով ապրեն ու աշխարեց Երվանդ Մելքոնյան բանասերն ու դիվանագիրը՝ թողնելով բարի անուն ու բաղցը հուշեր՝ մտերիմների, ընկերների հիշողությունում ապրելու համար Մեսրոպ արքապիսկոպոս Աշճյանի բնորոշմամբ որպես «Երվանդ բաղցը»: